

Արձանագրություն թիվ 2

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2019թ սեպտեմբերի 11-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2019-20 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին :
3. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուս.տարվա աշխատանքային պլանի նախագիծը բաժանված էր ամբիոնի վարիչներին, մանրամասն ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու համար: Ամբիոնների վարիչները փոփոխություններ և առաջարկներ չեն կատարել, հետևաբար “Քիմիայի” ֆակուլտետի գիտական խորհրդի աշխատանքային պլանը կունենա հետևյալ տեսքը: Դեկանատի անդամները կստանան ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուս.տարվա աշխատանքային նորացված պլանը:

Առաջարկում եմ հաստատել ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուս.տարվա աշխատանքային պլանը:

Խորհուրդը քվեարկությամբ միաձայն հաստատեց ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուս.տարվա աշխատանքային պլանը:

ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2019-20 ուսումնական տարվա
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սեպտեմբեր

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2019-20 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին :
3. Ընթացիկ հարցեր:

Հոկտեմբեր

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաղորդումը մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի գիտական սեմինարների կազմակերպման մասին:
2. Հաղորդում բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:
3. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
4. Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Հունվար

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Փետրվար

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:

3. Ընթացիկ հարցեր:

Մարտ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:

2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:

3. Ընթացիկ հարցեր:

Ապրիլ

1. Ֆակուլտետի ՈւԽ նախագիի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2019-20 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

3. Կուրսային աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:

4. Ընթացիկ հարցեր:

Մայիս

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2019-20 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:

3. Ընթացիկ հարցեր:

Հունիս

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:

2. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2019-20 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

3. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:

4. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:

5. Ընթացիկ հարցեր:

Քննարկված և հաստատված է քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ. սեպտեմբերի 11 -ին կայացած նիստում՝ արձանագրություն թիվ 2:

2. Նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան- Ըստ աշխատանքային պլանի այժմ պետք է լսենք ամբիոններում կատարված ծրագրային փոփոխությունների մասին:

- Ամբիոնների վարիչները նշեցին, որ թարմացվել են ինչպես դասախոսությունների, այնպես էլ լաբորատոր աշխատանքների ծրագրերը:

3. Տ.Վ.Ղուչիկյանը նշեց, որ ընթացիկ հարցերի մեջ քննարկվելու են մի քանի կետեր: Այստեղ կքննարկվեն ինչպես ուսանողների բարձրացրած հարցերը, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի:

Ա) Անվանական կրթաթոշակների հարցը:

Տ.Վ.Ղուչիկյան- Անվանական կրթաթոշակի համար դեկանատի կողմից առաջադրվել է գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Գրիգորյան Աստղիկը Քիմիա բաժնի բակալավրիատի IV-րդ կուրս: Հաշվի առնվել նրա առաջադիմությունը ուսումնասիրության ամբողջ ընթացքում: Ինչ առաջարկություններ ունեք: Գիտխորհրդի անդամները նշեցին, որ Ա.Գրիգորյանը լավ ուսանողուհի է ուսումնասիրության ընթացքում միշտ առանձնացել է բարձր առաջադիմությամբ և պատրաստավածությամբ: Քվեարկության միաձայն արդյունքում, որոշեցին Ա.Գրիգորյանին նշանակել "Ստեփան Ղամբարյանի" անվան կրթաթոշակ: Ա.Ա.Ավետիսյանի անվան կրթաթոշակի համար առանձնացվել է երկու թեկնածու Տիգրան Միերի Այվազյանը մագիստրատուրա I-կուրս և Վարդուհի Արայի Հովհաննիսյանը մագիստրատուրա II-կուրս: Տիգրան Այվազյանը "Էռազմուս+" ծրագրի շրջանակներում ուսումը 6 ամիս ժամկետով շարունակելու է արտասահմանում հետևաբար նա այդ կրթաթոշակը առաջիկա 6 ամիսների ընթացքում չի ստանա: Այդ պատճառով դեկանատը առաջարկեց երկրորդ թեկնածուին՝ ստուգելով նրա ՄՈԳ-ի միավորը ինչպես մագիստրատուրայում, այնպես էլ բակալավրիատում:

Հաշվի առնելով Վարդուհի Այվազյանի բարձր առաջադիմությունը և դասավանդող դասախոսների դրական կարծիքը՝ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդն, որոշեց Ա.Ա.Ավետիսյանի անվան կրթաթոշակին երաշխավորել "Քիմիա" մասնագիտությամբ, մագիստրատուրայի II կուրսի ուսանողուհի Վարդուհի Հովհաննիսյանին:

Բ) Ռեկտորատի կողմից առաջ քաշված հարցեր

- Տեղեկացնում եմ, որ արտասահման գործուղվող ուսանողները կամ դասախոսները գործուղումից 7-օր առաջ պետք է ներկայացնեն հրավեր նամակը և գործուղման նպատակը, որպեսզի բացակայությունը համարվի հարգելի: Վերադարձից հետո 3 օրվա ընթացքում պետք է ներկայացնել հաշվետվությունը՝ գործուղման վերաբերյալ:
- Ֆակուլտետում կազմակերպած ցանկացած միջոցառումից 10 օր առաջ պետք է տեղեկացնել լրատվական բաժնին, որպեսզի ԵՊՀ-ի կայքում այն լուսաբանվի: Քիմիայի ֆակուլտետում իրականացվող միջոցառումների, նիստերի լուսաբանման հարցերը կարգավորելու համար կարող եք դիմել Շիլաջյան Հասմիկին: Նա մեր ֆակուլտետի կոորդինատորն է:
- Ինչպես գիտեք ուսման վարձերի վճարման կարգը պարզեցվել է: Ուսանողները կարող են այն մուծել մաս-մաս: Եթե սոց. փաթեթների միջոցով է, ապա ուսանողը նախապես պետք է տեղակացնի և վճարումը կատարի ամսե-ամիս: Վճարումները պետք է կատարվեն յուրաքանչյուր ամսվա 10-ից ոչ ուշ:
- Մյուս շաբաթվանից սկսվելու է էլեկտրոնային ստորագրության կիրառությունը:

Գ) Քիմիայի ֆակուլտետում գործող “Քիմիա” առարկայից դպրոցական օլիմպիադայի կազմակերպիչները “Նամակ-առաջարկ” են ուղղել ԿԳՄՄ-նախարար Արայիկ Հարությունյանին, որտեղ առաջարկում են “Քիմիա” առարկայի օլիմպիադայի վերջին՝ Հանրապետական, փուլի հաղթողներին (1-ին, 2-րդ, 3-րդ տեղերի մրցանակակիրներին) ազատել քիմիա առարկայի միասնական քննություններից՝ նշանակելով 20 միավոր միայն այն դեպքում, եթե տվյալ աշակերտները հետագա ուսուցումը շարունակելու են քիմիայի ֆակուլտետում և նշանակել խրախուսական կրթաթոշակ համապատասխանաբար 50000, 35000 և 25000 դրամի չափով՝ 1 տարի ժամկետով: Այս նամակը էլեկտրոնային տարբերակով տրվել է գիտխորհրդի անդամներին՝ ծանոթացեք, շտկումներ և առաջարկներ արեք, որից հետո ուղղված և համալրված տարբերակը կուղարկվի Ա.Հարությունյանին:

Դ) Վիկտորյա Խաչատրյան- Կիրառական քիմիա բաժնի III- կուրսի ուսանողուհի:

Առաջին կուրսեցիների խնդիրն եմ բարձրաձայնում: Նրանց մեծ մասը չունի “Անօրգանական քիմիայի” լաբորատոր աշխատանքների դասագիրքը (հեղինակ Ս.Կ.Գրիգորյան), գրադարանում չկա: Ինչպես կարող ենք օգնել առաջին կուրսեցուն:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրոսյանը նշեց, որ տեղյակ է պրոբլեմի հետ և դա բացատրվում է հետևյալ կերպ. Այս տարի ունենք 51

ուսանող մեր ֆակուլտետում, բայց այդ գրքերից օգտվում են նաև կենսաբանական ֆակուլտետի ուսանողները՝ հետևաբար գրադարանում եղած 60 օրինակը չի բավականացրել պահանջարկին: Մենք շատ արագ կկարգավորենք այդ հարցը ուսանողին տալով էլեկտրոնային PDF-տարբերակը:

Նիստի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Նիստի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան